# ԵՊԲՀ ՔՈԼԵՋԻ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների մասնակցությունն 201 ( 94 %)

Հարցմանը մասնակցել է 201 ուսանող (94%), ինչը թույլ է տալիս արդյունքները համարել հուսալի:

**1. Նշեք որ կուրսում եք սովորում**




**2. Ձեր միջին առաջադիմությունը՝**




3. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գրաֆիկներում գերակշռում են դրական գնահատականները, ինչը վկայում է, որ ուսանողների մեծ մասը տեսական պատրաստվածությունից ընդհանուր առմամբ բավարարված է: Սակայն առկա է նաև միջին և ցածր գնահատականների նկատելի շերտ, ինչը ցույց է տալիս, որ տեսական նյութի մատուցման խորությունը, ծավալը կամ բարդությունը բոլորի համար լիարժեք բավարար չէ: Ուսանողների բաց պատասխաններում էլ նշվում է, որ՝ որոշ առարկաների նյութը չափազանց խտացված է, թեմաները տրվում են կարճ ժամանակահատվածում, նյութերը երբեմն հին են կամ քոլեջի մակարդակին ամբողջությամբ համապատասխանեցված չեն: Հետևաբար՝ տեսական հիմքը բավարար է, բայց օպտիմալացման կարիք կա:

4. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գործնական հմտություններով բավարարվածության մակարդակը դրական է, սակայն լիարժեք չի բավարարում ուսանողների ակնկալիքները: Բաց պատասխաններում հաճախակի նշված պրակտիկայի անարդյունավետության դիտարկումները հաստատում են այս պատկերը: Մասնավորապես նշվում է, որ՝

- պրակտիկաների ընթացքում ուսանողները հաճախ չեն ներգրավվում ակտիվ աշխատանքում,
- հիվանդանոցներում երբեմն ժամանակը չի օգտագործվում արդյունավետ,
- գործնական դասերի ծավալը քիչ է:

Ծրագրի ամենահաճախ նշված խնդրահարույց կողմն է:

5. **Մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ բավարար չափով հասանելիություն ունեցել եք անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ հասանելիություն չեմ ունեցել , 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գրաֆիկում միջին գնահատականը կազմում է առավել մեծ տոկոս, ինչը վկայում է, որ նյութատեխնիկական ապահովվածությունը բավարար է, բայց ոչ լիարժեք:

6. **Որքանով եք բավարարված անհրաժեշտ գրականության հասանելիությամբ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գրաֆիկը ցույց է տալիս միջինից բարձր գնահատականներ, սակայն բաց պատասխաններում բազմիցս բարձրաձայնվել է գրքերի տրամադրման և գրադարանի հասանելիության հարցը: Անշանակում է, որ ընդհանուր գնահատականը հարաբերականորեն դրական է, սակայն պահանջարկը գերազանցում է առկա հնարավորությունները:

7. **Որքանով լիարժեք և արդյունավետ են օգտագործվում դասաժամերը դասախոսների կողմից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ ոչ լիարժեք և անարդյունավետ, 5-ը՝ լիարժեք և արդյունավետ)




Գրաֆիկում գերակշռում է բարձր միավորների մասնաբաժինը: Ացույց է տալիս, որ դասավանդման գործընթացը ընդհանուր առմամբ կազմակերպված է լավ, սակայն միջին և ցածր գնահատականների առկայությունը ցույց է տալիս ,որ ուսանողները տեսնում են որոշ ունավետության բարձրացման կարիք :

8. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված հանրակրթական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




9. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված մասնագիտական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




8րդ և 9րդ գրաֆիկները ցույց են տալիս, որ մասնագիտական և հանրակրթական առարկաների դասավանդման որակը գնահատվում է բարձր: Միևնույն ժամանակ ուսանողների զգալի մասը նշում է, որ ոչ մասնագիտական առարկաները չափազանց շատեն, մասնագիտական առարկաներին պետք է ավելի մեծ ուշադրություն և ժամաքանակ հատկացնել, վերանայել քիմիայի ծրագիրը (բովանդակությունը, դասավանդման մեթոդը, գնահատումը)

**10. Ինչը և ինչպես կփոխեիք ուսումնական գործընթացը առավել լավը և արդյունավետ դարձնելու համար** (եթե առաջարկը վերաբերվում է կոնկրետ առարկայի ն/ամբիոնին, նշեք առարկայի անվանումը, խնդիրը և/կամ առաջարկությունը):

Սույն հարցին պատասխանել է 78 ուսանող, որոնց պատասխաններն առանց խմբագրման ներկայացված են հավելված 1ում

Ուսանողների ընդհանուր կարծիքը հետևյալն է`

1.Գործնական ուսուցման բարելավում

- Ավելացնել պրակտիկաները և գործնական դասերը
- Ապահովել ուսանողների ակտիվ ներգրավվածություն հիվանդանոցային պրակտիկաներում
- Տրամադրել անհրաժեշտ նյութեր և գործիքներ

2.**Մասնագիտական առարկաների առաջնահերթություն**

- Ավելացնել մասնագիտական առարկաների ժամաքանակը
- Վերանայել քիմիայի, անատոմիայի, ֆիզիոլոգիայի, ֆարմակոլոգիայի դասընթացները

3. **Ժամանակացույց և դասաժամեր**

- Կրճատել դասաժամերի տևողությունը (առաջարկ՝ 60 րոպե)
- Խուսափել քննությունների կուտակումից
- Վերանայել ուսումնական գրաֆիկը՝ հաշվի առնելով աշխատող ուսանողներին
- 4. **Գրականություն և նյութատեխնիկական ապահովում**
- Գրքերի տրամադրում և գրադարանի հասանելիություն
- Ուսումնական նյութերի պոդիականացում
- Լսարանների և պայմանների բարելավում

5. **Կազմակերպչական հարցեր**

- Տեղեկատվության ժամանակին և հստակ փոխանցում
- Գնահատման համակարգի թափանցիկություն
- Ուսանողների նկատմամբ ավելի պատասխանատու վերաբերմունք

**Ընդհանուր եզրակացություն**

Կրթական ծրագիրը գնահատվում է որպես կարևոր և անհրաժեշտ, սակայն ուսանողների հիմնական ակնկալիքը գործնական պատրաստվածության բարձրացումն է: Առաջնահերթ զարգացման ուղղություններն են՝ գործնական բաղադրիչի ուժեղացումը, մասնագիտական առարկաների խորացումը և ուսումնական գործընթացի կազմակերպչական օպտիմալացումը: Ուսանողների առաջարկները կառուցողական են և ուղղված են կրթության որակի բարձրացմանը:

**«Քույրական գործ» կրթական ծրագրի բարելավման առաջարկություններ**

Կրթական ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. **Գործնական ուսուցման բարելավում**

Առաջարկվում է ավելացնել գործնական պարապմունքների, սիմուլյացիոն վարժանքների և կլինիկական պրակտիկաների քանակը՝ ապահովելով ուսանողների ակտիվ մասնակցությունը իրական աշխատանքային

միջավայրին մոտ պայմաններում: Նպատակահարմար է նաև ընդլայնել համագործակցությունը բուժհաստատությունների հետ և գործնական դասերին ներգրավել փորձառու մասնագետների:

2. **Նյութատեխնիկական բազայի զարգացում**

Անհրաժեշտ է համալրել գործնական պարապմունքների համար նախատեսված սարքավորումները, մանեկենները և բժշկական պարագաները, ինչպես նաև շարունակաբար արդիականացնել լաբորատոր և սիմուլյացիոն ուսուցման տեխնիկական միջոցները:

3. **Ուսումնական ռեսուրսների հասանելիության ընդլայնում**

Առաջարկվում է թարմացնել գրադարանի մասնագիտական գրականությունը և ստեղծել էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների միասնական բազա

4. **Դասավանդման մեթոդների կատարելագործում**

Ակտիվորեն կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ կլինիկական դեպքերի վերլուծություն, թիմային աշխատանք և սիմուլյացիոն ուսուցում: Միաժամանակ անհրաժեշտ է կազմակերպել դասախոսների շարունակական մասնագիտական վերապատրաստումներ:

5. **Հետադարձ կապի համակարգի զարգացում**

Առաջարկվում է ձևավորել ուսանողների հետ մշտական հետադարձ կապի համակարգ՝ պարբերաբար իրականացնել ով հարցումներ և քննարկումներ

Հավելված 1

Ստորև ներկայացվում է 78 ուսանողների պատասխաններն առանց խմբագրման

1. Բարելավել գործնական հմտությունների ուսուցումը
2. Գրքերի տրամադրում
3. Կլուծեի լսարանների խնդիրը և կապահովեի հարմարավետությունը
4. Կխնդրեի գնահատելիս ուշադրություն դարձնել ուսանողի գիտելիքներին ոչ թե զուտ ներկա լինելու համար գնահատել ոչ համապատասխան:
5. գրադարան լինի որպիսի գրքերը տրամադրվի
6. Կրճատել 30 րոպեով դասերը և քիչ գիրք տան կարդալ հայոց լեզվի ամբիոնում
7. կուզեյ քիմիայի լավ մասնագետ լիներ ավագ դպրոցում

8. Ավելացնել գործնական աշխատանքներ: Քչացնել ոչ մասնագիտական նյութերը
9. Քիմիաառարկայի համալսարանական ծրագիրը փոփոխեն քոլեջին համապատասխան
10. ավելի շատ գործնական կատարվեն դասերը
11. Հստակ կայուն գրաֆիկ աշխատանքային
12. բարելավել գործնական հմտությունները
13. Ավագ դպրոցի քիմիաառարկայի դասատուն (ընկեր Կարապետյան) 102.9 խմբում փոխվի:
14. Գրականության հասանելիությունը բարձրացվեր
15. Գործնական դասերը ավելացրեք
16. Մասնագիտական առարկաներին հատկացնել ավելի շատ ժամանակ
17. Ամեն դասախոս պետք է խոսի միայն իր առարկայի մասին՝ երբեմն անդրադառնալով նաև իր աշխատանքային փորձին: Պարզապես անգիր սովորած տեքստը՝ լավ գնահատական ստանալու համար, ուսանողներին ոչինչ չի տալիս, և ուսումը դառնում է ձանձրալի: Ես կողմ եմ անհատական նախագծերին, որպեսզի յուրաքանչյուր մարդ, ներկայացնելով իր աշխատանքը, հասկանա ինչի մասին է խոսում և հետագայում կարողանա այդ գիտելիքները ճիշտ ձևով կիրառել :
18. Գործնական հմտությունները բարելավել
19. Ավելի հաճախ ուսումնառությունների անցկացում, նյութերի ավելի հեշտ ձեռք բերում, ցիկլերի շատացում
20. Դասերը 60 րոպե լինեն
21. Համալսարանի 2րդ կուրսի հնարավորություն ունենային՝ հատկապես քույրական բաժինը,
22. Գործնական առումով ավելի շատ կտրամադրվեր նյութեր
23. Օտար լեզուների ամբիոն Ավելի հեշտ ու հարմար կլիներ, եթե խմբերը կազմվեին ըստ լեզվի իմացության մակարդակի, որպեսզի լեզվի իմացության բարձր մակարդակով ուսանողները չդոփեն նույն տեղում ու չձանձրանան դասերին, իսկ ավելի ցածր մակարդակով ուսանողները չդժվարանան Քիմիայի ամբիոն Դասերի ընթացքում քննարկման թեման կտրուկ չփոխել ( չխոսել դասի հետ ընդհանրապես կապ չունեցող թեմաների շուրջ) չվիրավորել (օր' խփորիկներ, table, բմբուլիկներ, ծիտուլիկներ և թույլ տվեք էլ չշարունակեմ), Անցնել փորձեր( դասի ընթացքում երբևէ փորձ չենք տեսել , արել ) Ավելացնել քույրական գործ ֆակուլտետի անվճար տեղերը' ուսանողին շահագրգռելու համար Անատոմիայի դասի համար հատկացնել լսարան, (աշխատող պրոեկտորով, կամ մակետներով) ՀԱՎԼԱՏԻ ինֆորմացիա տարածել
24. Բարձր կուրսի ուսանողների դասերը մի դրեք 2-րդ հերթ խնդրում եմ😊 Մենք աշխատում ենք, որ հասցնենք վարձերը տալ
25. Հանրակրթական ուսուցման համար ստեղծվի յուրաքանչյուր առարկային նախատեսված մեկ գիրք: Քիմիայի ամբիոնում և ոչ միայն մի քանի ամբիոններում ևս ուսանողներին հասանելի իրենց իրավունքներից բխող քննություններին տեղեկատվության խստասահմանափակ և ոչ հավասար

ինֆորմացիայի քանակ: Դեկանատի կողմից ուսանողներին ոչ ճիշտ ինֆորմացիայի տրամադրում: Դեկանատի շատ անհարմար վայրը: երկրորդ կուրսում լանդշաֆտագիտություն առարկայի առկայությունը համարում եմ անիմաստ ուսանողի համար հավելյալ ծանրբեռնվածության պատճառ: Ավելացնել անվճար տեղեր ուսանողի շահագրգռվածությունը դեպի ուսում: Մնացած խնդիրների մասին թույլ տվեք չխոսել ինչպես կասեր իմ Ճատսիրելի դասախոսը:

26. ուսման որակը ցածր է պետք է մասնագիտական առարկաների վրա ավելի մեծ ուշադրություն դարձնել : ոչ մասնագիտականները ավելի շատ է քան մասնագիտականը, պրակտիկ դասեր են հարկավոր քանի որ ես այս տարի ավարտում եմ իմ մասնագիտության վերաբերյալ պրակտիկ շատ բաներ չիմանալով ու վստահ եմ ոչ իմ մեղքով
27. 60 rope tever dasery
28. Լսարաններ քոլեջին կտան դասերի համար,1-ին կուրսերը կլինեն առաջին հերթ,ավելի շուտ-շուտ զպչումներ
29. Քոլեջի երեխաներին, որ գրքեր տրամադրեն
30. Ավելացնել գործնական հմտությունների կիրառումը
31. Խորացվել մասնագիտացված առարկաների վրա
32. Պրակտիկան ավելի կբարել ավվեի
33. Օտար լեզուների ամբիոն Ավելի հեշտ հարմար կլիներ, եթե խմբերը կազմվեին ըստ լեզվի իմացության մակարդակի, որպեսզի լեզվի իմացության բարձր մակարդակով ուսանողները չդոփեն նույն տեղում ու չձանձրանան դասերին, իսկ ավելի ցածր մակարդակով ուսանողները չդժվարանան Քիմիայի ամբիոն Դասերի ընթացքում քննարկման թեման կտրուկ չփոխել ( չխոսել դասի հետ ընդհանրապես կապ չունեցող թեմաների շուրջ), չվիրավորել
34. Կարծում եմ, որ երրորդ կուրսում ամեն ինչ հրաշալի է, և ոչ ինչ չեմ փոխի
35. Գործնական աշխատանքները շատացնել և կրճատել ոչ մասնագիտական առարկաները
36. թքած մի ունեցեք քոլեջի ուսանողների վրա
37. Խնդրեմ,որ մենք ` քոլեջի ուսանողներս, ևս կարողանանք օգտվել համալսարանի գրադարանից:
38. 1.Քոլեջում անցնում ենք նենց բաներ, որ մեզ պետք չի, նյութերը հին են 2. դասապրոցեսների կազմակերպումը, բազմիցս պատահել է ամբողջ խմբով եկել ենք ու մեզ նույնիսկ չեն դիմավորել , միջանցքում 3 ժամ սպասել ենք ու գնացել տուն, կարծում եմ դեկանատի աշխատանքը պետք է վերանայել 3. Քոլեջը մեզ ինչ որ առավելություն չի տալիս համալսարան ընդունվելուց, իսկ տված վարձը չի համապատասխանում ստացած գիտելիքի որակին 4.Քոլեջը հնարավորություն չի տալիս զուգահեռ աշխատել , ովքեր ունեն դրա կարիքը 5. Կան դասախոսներ, ովքեր ինքնահաստատվում են ուսանողների վրա և ուսանողը բան չի կարանի որովհետև իրավունքները պաշտպանված չեն
39. գրքեր տրամադրել քոլեջի ուսանողներին
40. Praktikan aveli lavy kdarcnei

41. Իրականում նյութերը բավականին բարդ են, ժամանակը, դասացուցակները ճիշտ կազմված չեն, մի փոքր անհարմարություն է պատճառում դեկանատի հեռու լինելը, բավականին բարդ է, որ բոլոր առարկաներն են ազդում ռոտացիայի վրա և քույրերի մոտ շատ է մրցակցությունը, որոշ առարկաներ, որոնք մասնագիտական չեն, մանրամասն կազմված ուսումնասիրություններ են, ժամանակ առ ժամանակ խանգարում են մասնագիտական առարկաների քննություններին պատրաստվելուն, իսկ մասնագիտական առարկաները՝ բարձրագույնի նման են կազմված, ամեն ինչ վերջում կուտակվում են մեկ շաբաթի սահմաններում: օր՝ 1 օրում 3 ուսումնասիրություն և քննություն, և այդպես շարունակ մեկ շաբաթ:
42. Ճիշտ դասավորել դասերը
43. Պրակտիկաները ավելի արդյունավետ դարձնել , որպեսզի բոլորը չգան պարզապես ներկա ստանալու համար այլ ինչ որ բան ստանալու:
44. Գործնական հմտությունների բարել ավման համար ավելի շատ հնարավորություններ ընդձեռնել
45. Խնդրում եմ վերանայեք ժամերը շատ է ժամային գրաֆիկները այն երեխաները որոնք աշխատում են խնդրում եմ մտեք նրանց դրության մեջ ▒ մենք ևս մարդ ենք
46. Բարել ավել Գործնական Հմտությունների ուսուցանումը
47. Ես դժգոհ եմ նրանից, որ մենք անցնում ենք էլ եկտիվ դասեր: Այդ դասերի ընթացքում գրեթե ոչինչ չենք սովորում, սակայն բացակայությունների նկատմամբ շատ խիստ են վերաբերվում: Այդ ժամերին մեզանից շատերը ունեն պարապմունքներ , բայց դաընդհանրապես հաշվի չի առնվում: Մեզ նույնիսկ չեն հարցնում, թե որ ժամն է մեզ համար հարմար: Կցանկանայի, որ մեր կարծիքը ևս հաշվի առնվեր և դասերի կազմակերպումը լինի ավելի արդյունավետ և հասանելի բոլորի համար:
48. Առաջին խնդիրը որ ժամային առումով միշտ անհարմար է այն ուսանողների համար որոնք աշխատում են Երկրորդ խնդիրը որ հիմնականում դասերը միայն տեսական են գործնականը շատ քիչ է Կառաջարկեի որ ոչ թե <<մեռած ամիսներին >> գնանք պրակտիկայի նաև ակտիվ ամիսներին գնանք որպեսզի ինչ որ բաներ տեսնենք ավել
49. Ավել ացնել պրակտիկաները թույլ տալ ուսանողները անեն ոմանք
50. Դարձնել քննությունները միջանկյալ
51. Գործնական հմտություններին առավել շատ կարևորություն կտայի
52. Խնդրում եմ դասաժամերը առաջին հերթ միայն լինեն
53. Բժշկական քիմիայի ամբիոնի դասավանդման տեխնիկան ու գնահատման որակը ուղղակի շատ վատ է
54. Քոլեջի ուսանողներին գրքերի տրամադրում
55. Ուսումնական նյութերը հին գրականություն են պարունակում: Ցանկալի կլինեն նոր և ավելի հասկանալի: Պրակտիկաների ժամանակ կցվի քույր խմբին ով միշտ կլինի խմբի հետև աշխատանք կտրամադրի ամեն ուսանողին և կհետևի: Հետաքրքիր ձևաչափով ուսուցանվեն առարկաները: Օրինակ՝

փոքր քուիզեր որոնք ուսանողի գիտելիքները կամրապնդեն մինչև վերջնական քննության օրը: Այս մեթոդը կիրառվում է Տիկին Ֆեսչյանի կողմից որը շատ էֆֆեկտիվ էր ինձ և մնացածի համար:

56. Ավելի լավ կլինի, եթե ուսուցումը ավելի շատ հիմնված լինի գործնական գիտելիքների վրա
57. Գործնական հմտություններին ավելի շատ ուշադրություն դարձնել ն ավելի արդյունավետ կդարձնի մասնագիտացումը:
58. Ուսումնական գործընթացը առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկվում է նյութի ուսումնասիրման ընթացքում համադրել տեսական և գործնական բաղադրիչները:
59. Պրակտիկաների ժամանակ մատնված ենք անգործության,ոչ ինչ չենք անում(Միքայելյան,1-ին հիվանդանոց)կանգնում ենք միջանցքներում ու ոչնչի մեջ չեն ներգրավվում ուսանողներին: Կան քույրեր որոնք սովորեցնում են,կան նաև մեզ անտեսողները: Ժամանակի անիմաստ կորուստ
60. ապահովել ուսանողական տրանսպորտով դեպի հիվանդանոցներ ,որտեղ դասի ենք ըստ դասացուցակի
61. Դասաժամերի կարգավորում, արդյունավետ դասավանդում
62. Ինքս նախընտրում եմ պահպանել այս ուսումնական նախագիծը
63. Ավելի պատասխանատու. Վերաբերմունք ուսանողների հանդեպ
64. Առաջարկում եմ հատկացնել ավելի շատ անվճար տեղեր՝ անվճար ուսուցում ստանալու հնարավորությունը հասանելի դարձնելու ավելի մեծ թվով սովորողների համար և ապահովելու հավասար կրթական հնարավորություններ բոլորի համար:
65. Շեշտը կդնեի տեխնիկայի, պրակտիկ փորձերի ձեռքբերման վրա
66. գրքերի տրամադրում քոլեջի երեխաներին:
67. Պրակտիկաները արդյունավետ դարձնել
68. Քոլեջի քույրական գործի ուսանողները ոչ մի առավելություն չունեն համալսարանում, առավել ևս որ 1 տարի ու 2 են ընդունվում, մնացած տարեկիցներից
69. կարծում եմ, ավելի լավ կլիներ, եթե դեկանատն իր որոշումների մասին ժամանակին տեղյակ պահեր ուսանողությանը, ավելի պատասխանատու լիներ ուսանողների հանդեպ: Քիմիայի ծրագիրը, և՛ անօրգանական, և՛ օրգանական, ավելի մատչելի լիներ՝ նախատեսված քոլեջի համար: Առկա նաև լսարանի խնդիր, որ խանգարում է ուսպրոցեսսներին:
70. Ավելի շատ պրակտիկ դասեր լինեն
71. Փոփոխել ուսումնառության ժամանակացույցը կուտակումից խուսափելու համար
72. Ամեն բան շատ հիանալի է
73. Այն որ ունենանք գրադարան որպեսզի գրքեր տրամադրվեն
74. Ավելի հետաքրքիր նյութեր՝ սովորելու համար ու ուշադրություն) մերսի
75. դասաժամերի տևողությունը կրճատել
76. Կլինիկի անատոմիայի դասավանդման ձևը, կարծում եմ պետք է ավելի խորությամբ դասավանդել և ավելի երկար ժամանակահատվածում: Ֆիզիոլոգիական դասավանդման ձևը, նույնպես կարծում եմ, որ

պետք է ավելի երկար ժամանակ տրամադրել, քանի որ 1 շաբաթվա մեջ շատ դժվար է յուրացնել թեմաները: Գլխավորը պետք է վերանայել ֆորմալ լոգիայի նյութերը, քանի որ 2 ամսվա մեջ մենք այդքան մեծ ծավալով նյութ չենք կարող յուրացնել, բացի նրանից, որ ժամանակը քիչ է նյութը շատ է, նաև համալսարանում մինչ այդ առարկան անցնելը անցնում են այլ առարկաներ, որպեսզի հետագայում ֆորմալ լոգիան հասկանան, իսկ մենք ոչ և այդ պատճառով մեզ համար չափազանց դժվար է: Հուսամ հաշվի կառնենք այս հարցման պատասխանները և մեր քոլեջը կդառնա էլ ավելի լավը:

77. aveli shat dasajamer kavelacnei masnagitakan ararkanerin qani vor shat depqerum voch masnagitakan ararkan aveli shat enq usumnasirum qan masnagitakany

78. Գործնական դասերի շատացումը: